







ՅԱՅՏԱԳԻՐ

Ն Ե Մ Ե Ռ Ե Ն Ե

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱԳԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

ՀԱՅԵՐԵՆԱՍՏՐԱՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ի ՎԱՌՆԱ

մեր բարձր
ու հաստատ

ՀԱՅԵՐԵՆ ԵՒ ՓԱՂԱԳԱԿԵՆ

ԲԱՐՁՐ ԵՐԿՈՒՄ ԱՆԳԱՄ

Ինքնօգնութիւն ինչպէս ուրոյն անհատի,
նոյնպէս ուրոյն ազգի գոյութեան բնական եւ
բաշխարհութիւնն է :

Բնական օրինաց այս տրամադրութեան
շարժելով կ'զգանք թէ՛ պարտական է իւրաքան-
չիւր Ազգային անհատ իւր կարողութեանը սահ-
մանին մէջ իւրովսանն օգնել այն ամբողջու-
թեան՝ յորում կը պատկանի ինք արեամբ և
պատմութեամբ, և որովհետեւ անհատից թուոյն
չափով կաւեցնայ նաև ուժերու քանակութիւ-
նը և կարողութեան սահմանը՝ նոյն չափով կը
ստուարանայ պարտականութեանց ծանրու-
թիւնը այն անհատից հաւաքականութեան վը-
րայ, որը ի մի համախմբել տեղ տեղ նոյնա-
յեղ հասարակութիւններ կը կազմեն թէ՛ ի
Հայրենիս և թէ՛ յօտարութեան :

Յայտ սկզբանց կը ծագի համերաշխու-
թեան և պարտուց ու իրաւանց ճանաչողու-
թեան ոգին սոյն հաւաքաբար բնակող նոյնազան
անհատից մէջ թէ՛ առ միմիանս և թէ՛ առ այնս,
որը իրենցմէ անջատ գտնուելով իսկ՝ արեան
և պատմութեան նոյնութեամբ իրենց պատ-
կանած ամբողջութեան մի մասը կը կազմեն :

Քաղաքական տարաբաղդութեանց բեր-
մամբ յօտար գաղթելու ստիպուող մեր նախ-
նիք՝ այսու ոգւով առգործել ամենուրեք մեծ
խնամք ունեցած են ինքնօգնաբար և համերաշ-
խաբար ապրելու, որով աշխարհիս ամեն մասե-
րուն մէջ ցրուեալ Հայութիւնը կըցած է պահ-
պանուիլ դարերով, և եթէ տեղ տեղ կոր-
սուած են բազմաթիւ Հայ գաղթականներ,
պատճառն միայն այն է թէ՛ յետագայ սե-
րնոց մէջ տակաւ առ տակաւ տկարանալով
համերաշխութեան և առ միմիանս պարտուց
և իրաւանց ճանաչողութեան ոգին՝ օտար մե-
ծամասնութեանց ձուլիլ զօրութեանը զոհ
դնացած են :

Անցելոյն այս հրահանգիլ փորձառութիւ-
նը մեր աչաց առջեւ ունենալով՝ ներկայն ուղ-
ղելու և ապագայն պատրաստելու մեծ պար-
տականութիւն մը կը ծանրանայ ամեն Հայ
անհատի վրայ, ինչ սեռի՝ ինչ տարիքի՝ որ երկրի՝
և ինչ կացութեան և պատկանի, և որովհետեւ
տեւ յանուն Ազգային յառաջագիւծութեան
Տեղւոյս մէջ հաստատուել Ընկերային Իրաւ-
դրաց թէ՛ չկրնար անտարբեր գտնուիլ իւր
սոյն պարտականութեանը մէջ առանց մեղան-
չելու։ Ազգային գոյութեան այս բնական օրի-
նաց տրամադրութեանը դէմ, ուստի որոշած է
հրատարակել ի վառնա, մի թերթ ԻՐԱՆԻ-
ՈՒՆԻՔ անուամբ որոյ նշանաբանն պիտի ըլլայ,
իւրօրօգնութիւն և ՊԱՐՏՔ ԲՆ ԻՐԱՆԻՈՒՆԻՔ,
նպատակ ունենալով մի կողմէ ջանադար-
ծել սոյն ոգին իւր ազգայնաց մէջ և միւս կող-
մէ ի վեր հանել յաշտ օտար քաղաքակիրթ ազ-
գայ այն յառաջագիւծութիւններ՝ զոր Հայու-
թիւնը օրաստօրէ կրնէ սոյն ուղղութեան մէջ :

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ պիտի հրատարակուի ուստի
Հայերէն և Գաղղիերէն և եթէ պէտք դատ-
ուի ինչ ինչ յօդուածներ, որը աւելի գաւա-
ռացի Հայոց Հայերէն չհասկցող մասին կը
պատկանին, չպիտի զլայուի նաև Տաճկերէն
ըզուան ԻՐԱՆԻՈՒՆԻՔի սիւնեկաց մէջ :

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ Հայտի քննադատէ և ոչ մի Տէ-
րութեան քաղաքական ներքին խնդիրներն և
պիտի բաւականանայ իր անկողնակալ տարե-
գիր միայն եղբորութիւնները արձանագրելով,
բայց ազատ անկեղծութեամբ և խիստ անա-
չառութեամբ պիտի ջանայ մատնանել բնել այն
ամեն օտար քաղաքականութիւն՝ որ վերաբե-
րութիւն ունի Հայութեան հետ՝ թեր ու դէմ։
ԻՐԱՆԻՈՒՆԻՔ լոյս տեսնելով Պուլկարական

իշխանութեան տապաքական ազատ օրինաց
ներքէ՝ միշտ երախտագէտ սրտով պիտի յարի
սոյն իշխանութեան կենսական շահերուն, և
եթէ հարկը ներկայանայ, Հայտի դանուի
պարտադրանց զայն պաշտպանելու մասին :

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ Հայտականութիւն և ոչ մի շահա-
սիրական ձեռնարկութեան պիտի հրատարակ-
ուի Ընկերութեան կողմանէ կարգուող խոմ-
բագրական Մասնագործող մը հեղինակու-
թեամբ ընդ պատասխանատուութեամբ Տիար
Թ. Փափազեանի, ուստի ազատ ամեն կողմա-
նի նկատումներէ պիտի ջանայ առանց խորու-
թեան երկրի կամ հպատակութեան,

Ա. Ազատ թարգման կանգնել ընդհանուր
Հայութեան կարծեաց,

Բ. Միշտ վառ պահել Հայոց հաւատար-
մութեան զգացումներ՝ առ տիրող պետու-
թիւնն, համոզուած ըլլալով՝ որ Հայութեան
շահը կը պահանջէ պատրաստել իւր բարի ա-
պագայն ընդ հովանաւորութեամբ այն ազ-
գաց, որոց հպատակեցուցած է զինք՝ քաղա-
քական պարագայից բերմունքը,

Գ. Փոյթ տանիլ ամբաշնչելու միութեան
և համերաշխութեան ոգին ընդ մէջ այլ և այլ
մասանց ազգութեան,

Դ. Պաշտպանել ցլետին կէտ իւր կարո-
ղութեան, Ազգային իրաւունքները, թէ՛ օտար
ձգտմանց և թէ՛ Ազգային շրջանակի մէջ գըտ-
նուող զեղծմանց դէմ :

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ սիրով պիտի հիւրընկալէ իւր
էջերուն մէջ այն ամեն յօդուածներ և թըղ-
թակցութիւններ, որը կը համապատասխանեն
իւր նպատակին, բայց ո և է անձնականու-
թեան անձուկ շրջանակին մէջ գտնուող խըն-
դիրներ ընդ միշտ պիտի մերժուին : Կը հրա-
ւիրէ ուստի ամեն երկրի ազգայինները որ ա-
զատ կերպիւ արձագանգ տան իւր էջերուն
մէջ իրենց բաղձանայ և պիտոյցի՝ նշանակելով
միանգամայն գտնուած երկիրներուն թէ՛ Ազ-
գային իշխանութեանց և թէ՛ տեղական կա-
ռավարութեանց ընթացքը՝ Ազգային իրաւանց
նպատասար կամ հակառակ :

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ չարաթը երկու անգամ պի-
տի հրատարակուի մինչև ցնոր տնօրինութիւն,
և տարեկան բաժանորդագրին պիտի ըլլայ .

23 ֆրանք վարձայի համար :

26 ֆրանք Պուլկարից համար :

28 ֆրանք թղթատարական գաշակցու-
ցութեան երկիրներու համար. բաժանորդագ-
րութիւնները ստորագրանել են միայն վե-
ցամեայ շրջանի համար, կանխիկ վճարելի :

Կը խնդրուի ուրեմն ազգային յառաջա-
գիւծութեան ցանկացող բոլոր երկրի Ազգային-
ներէ՝ որ հաճին լրագրոյս բաժանորդագրու-
թեանը մատնակել, յիշականացումն Ընկե-
րութեանս բաղձանայ նպատակին արձանագ-
րելով որոշապէս իրենց հասցէն՝ խմբագրու-
թեանս կողմանէ պատրաստուած խնդրագրոյն
վրայ, նշանակելով միանգամայն թէ՛ որչափ ա-
տնուան համար կը փափային ունենալ զայն :

Թղթակցութիւնը և խնդրագրերը թղթա-
տարական ծախսը վճարուելով, պէտք է ուղ-
ղուին հետեւեալ հասցէիւ,

Առ խմբագրական Մասնագործով

ԻՐԱՆԻՈՒՆԻՔ լրագրոյ Հայրենասիրաց

Ընկերութեան ի վառնա,

1885 Մայիս 10

վառնա

Գործադիր Ժողով Հայրենասիրաց

Ընկերութեան

Ատենադպիր

Ս. ՀԱՅՈՒՆՅԱՆ

Ատենապետ

Յ. ԲԱՐՍԱՄՅԱՆ

AVIS

Le Droit

JOURNAL NATIONAL ET POLITIQUE

MI-HÉBDOMADAIRE

SERA PUBLIÉ A VARNA

en Arménien et en Français

Par les soins de la Société «Haïrénassiratz»

Paraissant chaque mercredi et samedi

Il aura pour but de développer parmi ses
connationaux, l'esprit de solidarisme et la cons-
cience du devoir et du droit et d'enregistrer les
progrès que la nation Arménienne fait journal-
lement dans cette direction.

En politique *Le Droit* publié sous l'égide
des lois libérales de Presse de la Principauté
Bulgare, restera avec reconnaissance attaché
aux intérêts vitaux de la Principauté et si le cas
se présente, il ne manquera pas de les défen-
dre énergiquement; convaincu d'autre part que
l'intérêt des Arméniens exige de préparer leur
avenir sous la protection des Etats, où ils se
trouvent en majorité soit en patrie comme à
l'étranger, il se fera une tâche sacrée de main-
tenir vifs les sentiments de fidélité de ses con-
nationaux envers les Gouvernements, dont ils
relient et de resserrer les liens de rapport qui
unissent leurs intérêts à ceux des Pays, où ils
sont hospitalisés.

Le Droit ne s'occupera de la politique é-
trangère que pour enregistrer les faits accom-
plis en chroniqueur impartial, mais il combat-
tra de tout son pouvoir, toute tendance d'empie-
tement sur les droits de la Nation Arménienne,
soit de la part des cercles administratifs natio-
naux que des Etats étrangers.

Le Droit qui sera publié sous la direction
d'un Conseil de Rédaction, présidé par M. T.
Papasian, citoyen de Varna, n'appartenant à
aucune entreprise de spéculation se constituera
l'organe libre de l'opinion et des aspirations lé-
gitimes de ses connationaux; il invite en con-
séquence les Arméniens de toutes les parties
du monde, à donner écho dans ses colonnes à
leurs pensées et sentiments, et toute corres-
pondance sera accueillie avec empressement
pourvu qu'elle ne soit pas conçue dans un
esprit contraire aux principes du Journal.

S'adresser au Conseil de Rédaction du
Journal *Le Droit* à Varna sous plis affranchis.

Les conditions d'abonnement sont :

fr. 23 pour Varna

» 26 pour l'Intérieur de la Bulgarie

» 28 pour les Etats compris dans l'Union-
Postale par an, subdivisibles en semestre et
payable d'avance.

Les personnes qui désirent prendre un a-
bonnement, sont priées de faire parvenir leur
adresse au Conseil de Rédaction du Journal en
indiquant en même temps la durée de leur a-
bonnement.

le 10 Mars 1885

Varna

Conseil Exécutif

de la Société Haïrénassiratz

Secrétaire

S. Hadjikian

Président

J. Parssamian

